ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1005-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2013.10.02/54(994) Հոդ.899	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	29.08.2013
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	26.09.2013
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.07.2014	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄՐՑՈՒՅԹԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2013 թվականի N 1005-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄՐՑՈՒՅԹԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի չափանիշները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի մասնակցության հայտի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Տ. Սարգսյան

2013 թ. սեպտեմբերի 26
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
օգոստոսի 29-ի N 1005-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհ) լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) անցկացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի նպատակն է՝

1) բացահայտել և խրախուսել բուհերի այն ուսանողներին, ովքեր ցուցաբերել են բարձր առաջադիմություն և իրենց առավել ակտիվ են դրսևորել համապատասխան մասնագիտական ոլորտներում.

2) նպաստել ուսանողների առաջադիմության բարձրացմանը.

3) խթանել ուսանողների մասնակցությունը և ձեռքբերումները մասնագիտական ոլորտների աշխատանքներում.

4) խթանել մրցակցությունը բուհերի ուսանողների միջև:

3. Մրցույթն անցկացվում է ներբուհական և միջբուհական (հանրապետական) փուլերով, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով՝ ըստ հետևյալ ոլորտների՝

1) բնագիտական (այդ թվում՝ մաթեմատիկական-տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀՏ).

2) բժշկություն.

3) հումանիտար գիտություններ.

4) հասարակագիտություն.

5) ճարտարագիտություն (այդ թվում՝ ճարտարապետական/գյուղատնտեսական).

6) մշակույթ-սպորտ.

7) հայագիտություն:

4. Մրցույթին կարող են մասնակցել առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի 2-4-րդ կուրսերի, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ առաջին կիսամյակն ավարտած Հայաստանի Հանրապետության պետական և հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, որոնք, ըստ նշված ոլորտների, համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 29-ի N 1005-Ն որոշման N 2 հավելվածում նշված չափանիշներին:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

5. Մրցույթի ներբուհական փուլը կազմակերպում են բուհերը:

6. Մրցութային հանձնաժողովի կազմը հաստատում է բուհի ռեկտորը՝ ներառելով համապատասխան ֆակուլտետների դեկանների, ամբիոնի վարիչների, ինչպես նաև գիտական խորհրդի, ռեկտորատի, ուսանողների հետ արտաուսումնական աշխատանքների համակարգման բաժնի, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչների:

7. Բուհը մրցույթի առաջին փուլի արդյունքներով մինչև հոկտեմբերի 20-ը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) է ներկայացնում ըստ ոլորտների և կրթական ծրագրերի մեկական հաղթողների հետևյալ փաստաթղթերը՝

1) մասնակցության հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 29-ի N 1005-Ն որոշման N 3 հավելվածի.

2) ըստ չափանիշների՝ հավաքած միավորները.

3) քաղվածք ֆակուլտետի խորհրդի նիստի արձանագրությունից.

4) ստուգման գրքույկի պատճեն, առաջադիմության թերթիկ.

5) բնութագիր.

6) դեկանի և պրոռեկտորի ստորագրությամբ հրապարակումների ցուցակ կամ ստեղծագործական, սպորտային մրցույթների, օլիմպիադաների մասնակցությունը հավաստող փաստաթղթեր:

8. Մրցույթի երկրորդ փուլի մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը (3 ներկայացուցիչներ՝ նախարարությունից, 3-ը՝

բուհերի ուսանողներից, 4-ը՝ բուհերի մրցույթի կազմակերպիչներից և 1-ը՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամից):

9. Հանձնաժողովը՝

1) հաստատում է իր գործունեության աշխատակարգը.

2) քննարկում է մրցույթի անցկացման տեխնիկական և տեղեկատվական ապահովման հարցեր.

3) անցկացնում է մրցույթի ներկայացված փաստաթղթերի փորձաքննություն.

4) ամփոփում է մրցույթի արդյունքները.

5) հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

10. Հանձնաժողովը մինչև դեկտեմբերի 10-ը յուրաքանչյուր ոլորտում որոշում է հաղթողներին (1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր):

11. Մրցույթի հաղթողները որոշվում են հավաքած առավելագույն միավորների քանակի հիման վրա: Ոլորտներում սահմանված չափանիշների գնահատման համար մրցութային հանձնաժողովի կողմից կիրառվում է 3-10 միավորանոց գնահատման սանդղակ:

12. Հավասար միավորների դեպքում հաշվի է առնվում ուսանողի առաջադիմությունը և ոլորտում ըստ հերթականության ներկայացված չափանիշները:

13. Մրցույթի հաղթողները պարգևատրվում են հավաստագրերով և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի սահմանած մեկանգամյա անվանական կրթաթոշակներով:

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար **Վ. Գաբրիելյան**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
օգոստոսի 29-ի N 1005-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Բնագիտական (այդ թվում՝ մաթեմատիկական-տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀՏ), բժշկական, հումանիտար, հասարակագիտական, ճարտարագիտական (այդ թվում՝ ճարտարապետական) գյուղատնտեսական ոլորտներ՝

1) ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը գնահատվում է 8-10 միավորներով՝

ա. 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 80%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 85%-ը,

բ. 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 85%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 90%-ը,

գ. 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 90%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 100%-ը.

2) ներկայացված թեկնածուների գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը գնահատվում է 5-7 միավորներով՝

ա. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են ըստ ներկայացված ոլորտների՝ ներհամալսարանական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն պատվոգրեր, գովասանագրեր, դիպլոմներ,

բ. 6 միավորի կարող են հավակնել այն ուսանողները, ովքեր մասնակցել են ներկայացված ոլորտների՝ հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն առնվազն երկու հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում,

գ. 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են ներկայացված ոլորտների՝ միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն առնվազն երկու հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում.

3) ներկայացված թեկնածուների հասարակական ակտիվությունը գնահատվում է 3-5 միավորներով՝

ա. 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն,

բ. 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում,

գ. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են համալսարանական ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

2. Մշակույթ-սպորտ ոլորտներ՝

1) ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը գնահատվում է 8-10 միավորներով՝

ա. 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 80%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 85%-ը,

բ. 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 85%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 90%-ը,

գ. 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 90%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 100%-ը.

2) ներկայացված թեկնածուների ուսման մասնագիտական ձեռքբերումները գնահատվում են 5-7 միավորներով (մշակույթ)՝

ա. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են քաղաքային և ներբուհական առնվազն երկու ցուցահանդեսների, մրցույթների հաղթողներ,

բ. 6 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են հանրապետական առնվազն երկու ցուցահանդեսների, մրցույթների հաղթողներ,

գ. 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են միջազգային առնվազն երկու ցուցահանդեսների, մրցույթների հաղթողներ.

3) ներկայացված թեկնածուների ուսման մասնագիտական ձեռքբերումները գնահատվում են 7-5 միավորներով (սպորտ)՝

ա. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են քաղաքային և ներբուհական առնվազն երկու մրցույթի հաղթողներ,

բ. 6 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են առնվազն երկու հանրապետական մրցույթի հաղթողներ,

գ. 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր հանդիսանում են առնվազն երկու միջազգային մրցույթի հաղթողներ.

4) ներկայացված թեկնածուների հասարակական ակտիվությունը գնահատվում է միավորներով՝

ա. 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն,

բ. 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում,

գ. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են համալսարանական ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

3. Հայագիտության ոլորտ

1) ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը գնահատվում է 8-10 միավորներով՝

ա. 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 80%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 85%-ը,

բ. 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 85%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 90%-ը,

գ. 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր

առավելագույն արժեքի 90%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 100%-ը.

2) ներկայացված թեկնածուների գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը գնահատվում է 5-7 միավորներով՝

ա. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են հայագիտական գիտությունների գծով՝ ներհամալսարանական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն պատվոգրեր, գովասանագրեր, դիպլոմներ,

բ. 6 միավորի կարող են հավակնել այն ուսանողները, ովքեր մասնակցել են հայագիտական գիտությունների գծով՝ հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն առնվազն երկու հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում,

գ. 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են հայագիտական գիտությունների գծով՝ միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն առնվազն երկու հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում.

3) ներկայացված թեկնածուների հասարակական ակտիվությունը գնահատվում է 3-5 միավորներով՝

ա. 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն,

բ. 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում,

գ. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են համալսարանական ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար **Վ. Գաբրիելյան**

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2013 թվականի
օգոստոսի 29-ի N 1005-Ն որոշման

Հ Ա Յ Տ Ի Ձ Ե Վ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Ոլորտը	
Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, կրթական ծրագիրը (բակալավր, մագիստրոս), ֆակուլտետը, մասնագիտությունը, կուրսը	
Մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը	
Ծննդյան ամսաթիվը	
Կոնտակտային հեռախոսահամարը	
Կցվող փաստաթղթերի ցանկը	

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար **Վ. Գաբրիելյան**